

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՌԱՏԱՅԵԼ ԳԱՌՆԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՄԵԴԻԱ ԴԻՄԿՈՒՐՍԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
(ԱՆԳԼԵՐԵՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՔԻ
ՓԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)**

Ժ.02.07 - «Ռումանագերմանական լեզուներ»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բ.գ.դ., պրոֆեսոր
Սեդա Քերոբի Գասպարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բ.գ.դ., պրոֆեսոր
Լուսինե Արմենի Հարությունյան
բ.գ.թ., դոցենտ
Քրիստինե Մուրադի Հարությունյան

Առաջատար կազմակերպություն՝

Հայ-ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022 թվականի դեկտեմբերի 7-ին՝ ժամը 11-ին ՀՀ ԲՈԿ-ի Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թվականի հոկտեմբերի 26-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
բ.գ.դ., պրոֆեսոր՝



Գայանե Մուրադյան

Մեղիա դաշտը լեզվական մտաշահարկման (մանիպուլյացիայի) պոտենցիալ ոլորտ է, որը հատկապես սոցիալական հաղորդակցման ուղերձը միջնորդավորված է հասցնում հասցեատիրոջը՝ հաճախ առանց ակնկալելու վերջինիս արձագանքը: Միննույն տեղեկատվությունը, մասնավորապես՝ քաղաքանը, ընթերցողին ներկայացնելու բազմաթիվ միջոցներ ու եղանակներ կան, սակայն միշտ չէ, որ հանրությանը մատուցվող նորությունները ուղեկցվում են լրագրողների անաչառ ու անկողմնակալ վերաբերմունքով, ընդ որում՝ այդ միջոցները կարող են գործադրվել ինչպես բացահայտ, այնպես էլ քողարկված՝ լեզվական միավորների արհեստավարժ մտաշահարկմամբ:

Ատենախոսության **նպատակն** է համակողմանի քննության առնել մեղիա դիսկուրսում կիրառվող մտաշահարկային լեզվի ամբողջական կամ մասնակի ներուժը, որը դրսևորվում է տարաբնույթ լեզվական միջոցներով և հնարավորություն է տալիս մտաշահարկողներին (այս դեպքում՝ լրագրողներին) թիրախավորելու, մոլորեցնելու և շփոթեցնելու իրենց հասցեատերերին՝ հաճախ արժեզրկելով ներկայացվող փաստերը և որոշակիորեն ուղղորդելով ընթերցողի ընկալումը:

Այս նպատակին հասնելու համար, ատենախոսության մեջ առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

- դիտարկել քաղաքական դիսկուրսի ուսումնասիրության մոտեցումներ ու տեսություններ՝ վեր հանելով քաղաքական խոսքի և ընդհանրապես քաղաքականության հիմնական բաղադրիչները (լեզու, գործողություն, հակամարտություն, համագործակցություն),
- ուսումնասիրել մտաշահարկման հայեցակարգը՝ որպես լեզվահոգեբանական երևույթ և դրա հնարավոր դրսևորումները քաղաքական մեղիա դիսկուրսում, քննության ենթարկել մտաշահարկման ռազմավարություններն ու մեթոդները, որոնք արտահայտվում են լեզվական տարբեր միջոցներով և լայն կիրառություն գտնում քաղաքական մեղիա դիսկուրսում,
- ուսումնասիրել քաղաքական մեղիա դիսկուրսի մտաշահարկային բնույթը՝ տեսադաշտում պահելով լեզվական մտաշահարկման բառային հայեցակերպը,
- վեր հանել քաղաքական մեղիա դիսկուրսի ձևաբանական և շարահյուսական բնութագրական գծերը,
- ուսումնասիրել մեղիա դիսկուրսի լեզվի և ոճի առանձնահատկությունները՝ գործադրելով վերլուծության լեզվա-ոճական մեթոդը, որը հնարավորություն է տալիս քաղաքական լրատվական հոդվածների համատեքստում ճանաչելու և վեր հանելու մտաշահարկման իրականացմանը նպաստող տարաբնույթ արտահայտչամիջոցների և ոճական հնարների կիրառության յուրահատկությունները,
- առաջնորդվելով տեքստաբանական մոտեցման արդյունավետության սկզբունքով՝ համակցել քաղաքական մեղիա դիսկուրսի տարբեր հայեցակերպերի քննությունը և տեքստային վերլուծության տարաբնույթ մեթոդ-

ների կիրառմամբ՝ բացահայտել մեղիա մտաշահարկման բազմաեղանակային բնույթը քաղաքական լրատվական հոդվածների համատեքստում,

- իրականացնել որակական-քանակական ուսումնասիրություն հարցման առցանց հարթակի միջոցով, պարզել, թե ինչպես է հանրությունը ընկալում մտաշահարկումը և ինչն է կարևորում այս կամ այն լրատվությունն ընթերցելիս:

Սույն ատենախոսության թեմայի **արդիականությունը** հիմանվորում է քաղաքական մեղիա դիսկուրսի աննախադեպ կարևորությամբ և ժամանակակից աշխարհում նրա կատարած անփոխարինելի դերով, հատկապես եթե հաշվի է առնվում այն փաստը, որ կատարված ուսումնասիրության շրջանակում դիտարկված հետազոտական նյութը քաղված է մերօրյա անգլալեզու մեղիայից: Ակնհայտ է, որ առցանց լրատվությունը իրավամբ համարվում է տեղեկատվության հիմնական և ընթերցողների լայն շրջանակ ունեցող աղբյուր, ուստի լեզվաբանական մոտեցմամբ քաղաքական խոսքի հիման վրա գրված լրատվությունները համակողմանիորեն քննության ենթարկելը հնարավորություն է տալիս վեր հանել մտաշահարկման ընդհանուր նկարագիրը, դրա բացահայտ և անուղղակի դեպքերը ոչ միայն լեզվական, այլև արտալեզվական գործոնների դիտանկյունից:

Ուսումնասիրության գիտական **նորույթը** պայմանավորված է այն հանգամանքով, որ առաջին անգամ փորձ է արվում մեղիա-քաղաքական լուրեր ներկայացնող հոդվածները և դրանց վերնագրերը ենթարկել համակցված և համապարփակ լեզվա-գործաբանական արժևորման՝ չափամանափակվելով լեզվի որևէ կոնկրետ հայեցակերպի քննությամբ (օրինակ՝ բառային, ձևաբանական կամ շարահյուսական և այլն): Ուղեկցվող առցանց հարցման ծրագրաշարով իրականացված որակական-քանակական հետազոտությունը, որը միտված է բացահայտելու հանրության լայն շերտերի՝ մտաշահարկային խոսքի ընկալման յուրահատկությունները՝ կախված լեզվակիր կամ ոչ լեզվակիր լինելու հանգամանքից, գրագիտության և միջլեզվային իրազեկվածության, նաև վերլուծական հմտությունների առկայության մակարդակից, կարող է ելակետ դառնալ մտաշահարկման բազմաեղանակային գործիքակազմի վերհանման համար: Առցանց հարցման կիրառումը ոչ միայն հաստատում է մեր հետազոտությամբ ձեռք բերված արդյունքների հավաստիությունը, այլև լույս է սփռում քաղաքական մեղիա դիսկուրսում այսօր արդեն աննախադեպ լայն կիրառություն ունեցող մտաշահարկման երևույթի հասկացման գործընթացի վրա՝ նպաստելով մտաշահարկման ընդհանուր տեսության զարգացմանը:

Ատենախոսությունը կարևոր է **տեսական** առումով, քանզի հետազոտության արդյունքները, որոնք ձեռք են բերվել քաղաքագիտության, հասարակագիտության, լրագրության և, որ ամենակարևորն է, լեզվաբանության և դիսկուրսի ուսումնասիրության տեսական կարևորագույն դրույթների հիմքի վրա, կարող են նպաստավոր լինել նշված ոլորտներում մտաշահարկման երևույթին առնչվող տեսական խնդիրների լուծման հարցում և խթանել նոր ուղղությունների զարգացումը:

Ուսումնասիրության **գործնական արժեքը** նախ և առաջ բխում է ստացված արդյունքների՝ հաղորդակցության տեսության և քաղաքական վերլուծության ոլորտներում կիրառվելու հնարավորությունից: Դրանք կարող են նաև ներդրվել լեզվա-գործաբանության, իմաստաբանության, լեզվա-ոճաբանության, մեդիա ուսումնասիրությունների, լրագրության, քննադատական դիսկուրսի վերլուծության տեսական և գործնական դասընթացներում՝ հետագայում նաև զարգացում գտնելով ավարտական, մագիստրոսական և թեկնածուական հետազոտություններում, ինչպես նաև ներառվել անգլերենի գործնական ուսուցման դասընթացներում:

Քաղաքական մեդիա դաշտում մտաշահարկման բազմաեղանակային կիրառման փաստերի առկայությամբ է պայմանավորված սույն ուսումնասիրության **մեթոդաբանական ուղղվածությունը**: Մտաշահարկման բարդ երևույթի համակողմանի քննություն իրականացնելու և հնարավոր հուսալի արդյունքներ ապահովելու մեր մտադրությունը կողմնորոշել է մեզ կիրառելու վերլուծության տարաբնույթ մեթոդներ՝ համեմատական-հակադրական, ինդուկտիվ, դեդուկտիվ, դիսկուրսի և քննադատական դիսկուրսի վերլուծության, իմաստաբանական, իմաստագործաբանական, լեզվա-ոճական, ինչպես նաև տեքստաբանական և նշանագիտական վերլուծության:

Ուսումնասիրության ոլորտը առնչվում է քաղաքական դիսկուրսի և դրա վերլուծության, լեզվա-գործաբանության, լեզվա-ոճաբանության, տեքստի լեզվաբանության, լրագրության և հատկապես քաղաքական լրագրության բնագավառներին, և դա հիմնավորվում է մտաշահարկման երևույթի միջոլորտային բնույթով: Որպես հետազոտության **փաստական նյութ** օգտագործվել են անգլալեզու մեդիաքաղաքական տեքստերը (լրատվական հոդվածներ, զեկույցներ, կարծիքներ, լուրերի վերնագրեր), որոնք վերարտադրում և ներկայացնում են տարբեր քաղաքական իրադարձությունների հիման վրա գրված պատմություններ:

Հետազոտական նյութի փորձաքննությունն անցել է աշխատանքի հիմնադրույթները ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի նիստերում ներկայացված տարբեր հաղորդումների և զեկուցումների միջոցով, ԵՊՀ «Հակահայկական քարոզչական դիսկուրսի հետազոտությունների լաբորատորիա»-ի բազային թեմայի շրջանակում կազմակերպված գիտական սեմինարում (13, հունվար 2022, ԵՊՀ) կարդացված զեկուցման և ակտիվ քննարկման ձևաչափով: Աշխատանքի հիմնախնդիրները քննարկվել են նաև Վենետիկի Կա Ֆոսկարի համալսարանում (հունիս 2022) փոխանակման ծրագրի շրջանակում կատարած մեր այցելության ընթացքում:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը պայմանավորված են վերջինիս նպատակով, առաջադրված խնդիրներով, հետազոտվող նյութի պահանջներով. այն բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության և համացանցային աղբյուրների ցանկից:

Ներածությունում հիմնավորվում են ուսումնասիրվող թեմայի ընտրությունը, արդիականությունը, նորույթը, նպատակն ու խնդիրները, տեսական և գործ-

նական նշանակությունը, մեթոդաբանությունը, հետազոտության ոլորտը, հետազոտության փաստական նյութը:

Գլուխ I-ում՝ «Քաղաքական մեդիա դիսկուրսը որպես տեսական ուսումնասիրության առարկա» (Media-Political Discourse as an Object of Theoretical Study), որը բաղկացած է երեք ենթագլխից (1. Different Approaches to the Study of Political Speech; 2. Inherent Qualities and Characteristics of Media News Writing; 3. An Overview of the Manipulative Use of Language in Speech) հետազոտական ուշադրության կենտրոնում են քաղաքական խոսքի և հատկապես մեդիա-քաղաքական դիսկուրսի ուսումնասիրության տարբեր տեսություններ և մոտեցումներ, լեզու-դիսկուրս հարաբերակցությանը, քաղաքականության հիմնական բաղադրիչների (լեզու, գործողություն, հակամարտություն) համագործակցությանը վերաբերող և հարակից այլ խնդիրներ: Աշխատանքի այս գլխում քննական դիտարկման են ենթարկվում նաև մեդիա լրագրությանը բնորոշ որակական հատկանիշներ ու բնութագրումներ, ինչպես նաև քաղաքական մեդիա դիսկուրսում կիրառվող մտաշահարկման ռազմավարության ու մարտավարության ընդհանուր խնդիրներ: Այս գլխի շրջանակում մեր ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ քաղաքական մեդիա դիսկուրսի բազմաբնույթ ու բազմաշերտ համատեքստում առկա մտաշահարկման տարբեր դրսևորումները ճանաչելու և հակազդելու համար անհրաժեշտ է դիսկուրսի սթափ ու գիտակցված արժևորում, ինչպես նաև լեզվական ու ոչ լեզվական գիտելիքների հենք՝ մտաշահարկման դեպքերը ճիշտ ընկալելու և ազդեցությունից խուսափելու համար:

Գլուխ II-ը՝ «Մտաշահարկման տարբեր հայեցակերպերի քննությունը քաղաքական մեդիա դիսկուրսում» (Insights into Different Aspects of Manipulation in Media-Political Discourse) վերտառությամբ, ներկայացված է հինգ ենթագլխով, որոնք, ըստ էության, ուսումնասիրության գործնական մասն են և ուղղված են մտաշահարկման երևույթի տարբեր հայեցակերպերի վերլուծությանը՝

- մտաշահարկման բառային արտահայտությունը քաղաքական մեդիա դիսկուրսում,
- մտաշահարկման ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները մեդիա-քաղաքական դիսկուրսում,
- մտաշահարկման ռճական դրսևորումը մեդիա-քաղաքական դիսկուրսում
- մտաշահարկումը՝ որպես տեքստաբանական երեւույթ մեդիա-քաղաքական դիսկուրսում:
- մեդիա-քաղաքական մտաշահարկումը՝ որպես որակական-քանակական ուսումնասիրության առարկա:

Առաջին ենթագլուխը («The Lexical Expression of Manipulation in Media-Political Discourse») նվիրված է բառային մակարդակում իրականացվող մեդիա-քաղաքական մտաշահարկման ուսումնասիրությանը:

Լրատվական հոդվածներում, մասնավորապես, հետաքրքրված լինելով մտաշահարկման խնդիրների քննությամբ, նկատում ենք, որ իրենց առաքելությունն իրականացնելիս հեղինակները (լրագրողները) շատ հաճախ դիմում են ամենատարաբնույթ լեզվական տարրերի օգնությանը (բառապաշար, ձևաբանական ու շարահյուսական միավորներ, ոճավորման միջոցներ և այլն): Մույն ենթագլխում առաջնային է համարվել մտաշահարկման բառային միավորների քննությունը՝ նկատի ունենալով այն կարևոր հանգամանքը, որ առաջին հերթին հենց բառն է խոսքում իմաստ ձևավորում: Տեղեկատվական հոդվածներում կիրառվող բառապաշարի քննությունը գործառական-հաղորդակցական լույսի ներքո հնարավորություն է տալիս բացահայտելու նախ բառերի՝ որպես լեզվական համակարգի միավորների մտաշահարկային հնարավորությունները լայն իմաստով և ապա բառամիավորների հեղինակային նախընտրության ու կապակցման ազդեցությունը փոխանցվող տեղեկատվության վրա: Օրինակ, լրատվամիջոցների որոշ հոդվածներում կարող ենք հանդիպել *կրկնախոսքի* դեպքերի (double speak)¹, որը, ըստ Merriam-Webster բառարանի նշանակում է «լեզու, որն օգտագործվում է խաբելու նպատակով՝ սովորաբար ճշմարտությունը թաքցնելու կամ խեղաթյուրելու միջոցով»: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կրկնախոսքը կարող է իրականացվել *մեղմասության* (euphemism), *մեղմացման* (mitigation) և այլ միջոցներով: Մավածը պարզաբանելու համար, դիտարկենք Հայոց ցեղասպանության վերաբերյալ թուրքական Hürriyet օրաթերթից վերցված հետևյալ օրինակը՝

Armenian ethnic cleansing as 'de-Islamization'².

Նախ ուշադրություն դարձնելով վերնագրին՝ կարող ենք նկատել, որ ցեղի բնաջնջմանն ուղղված պատմական այս ողբերգությունը (Armenian Genocide) որակվել է «Էթնիկական զտում» (Armenian ethnic cleansing) արտահայտությամբ, ինչը լեզվաոճական առումով *մեղմասություն* է (euphemism): Ոճական այս հնարի կիրառումն, անշուշտ, պատահականությունն չէ, այն նպատակադրված միտում է՝ բացառելու երևույթի «սպանություն», «բնաջնջում» բաղադրիչները՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ ցեղասպանությունն ինքնին կրում է հանցավոր բնույթ, և դրա ընդունումը կհանգեցնի Թուրքիայի նկատմամբ քրեական հետապնդման և դատական պատասխանատվության, մինչդեռ Էթնիկ զտումները այդ աստիճան լուրջ ու սարսափելի գործողություններ չեն: Մյուս կողմից՝ de-Islamization (ապախլամացում) բառի կիրառումը նպատակ ունի պատասխանատվությունից ազատելու նրանց, ովքեր հակված են պայմանականորեն արդարացնել սարսափելի պատմական իրողությունը՝ փորձելով այն կապել կրոնի հետ: Դիտարկելով նույն հոդվածից մեկ այլ օրինակ՝ *Yesterday was the 97th anniversary of*

¹ Double speak. (n.d.). In *Merriam Webster Dictionary*. // URL: <https://www.merriam-webster.com/dictionary/doublespeak>

² Akyol, M. (2012). Armenian ethnic cleansing as 'de-Islamization'. *Hürriyet Daily News*. // URL: <https://www.hurriyetdailynews.com/opinion/mustafa-akyol/armenian-ethnic-cleansing-as-de-islamization-19180> (մուսք 18.02.2022)

what Armenians call the “Great Catastrophe,” or the ethnic cleansing of Ottoman Armenians from Anatolia, their historical homeland, in 1915. Those who commemorated the tragedy included some Turks, such as the group that gathered in Istanbul’s Taksim Square ³, կարևոր է ընդգծել, որ Հայաստանը պատմական այդ որբերգությունը երբեք չի որակել որպես «Մեծ աղետ», քանի որ «աղետ» բառը ենթադրում է հանկարծակի իրադարձություն և մտազուգորդվում է գլխավորապես բնությանը առնչվող երևույթների հետ, մինչդեռ ցեղասպանությունը նախապես ծրագրված և հստակ նպատակադրված երևույթ էր: Մա նշանակում է, որ տվյալ դեպքում հաղորդակցական ուղերձը կեղծված է և մոլորության մեջ է գցում ընթերցողին՝ ստիպելով նրան ենթադրել, որ հայերի ընկալմամբ՝ ցեղասպանությունը համարվում էր «մեծ աղետ»:

Այսպիսով, լրատվական տեքստեր կարդալիս մեր անմիջական արձագանքը երբեք չի լինի լրագրողի կողմից օգտագործված հոլովական վերջավորությունները կամ բայական խոնարհման ձևերը վերլուծելը, չնայած այն հանգամանքին, որ նման տարրերը նույնպես կարող են ազդել և նույնիսկ որոշակի դեր խաղալ մեր հասկացումն ու մտածողությունը շահարկելու հարցում: Խոսքի ուժը բառերի օգտագործման շրջանակում կարող է գիտակցաբար ընտրվել որպես մտաշահարկման և ազդեցության հասնելու գործիք՝ կախված նպատակային լսարանից (օրինակ՝ քաղաքական քարոզչության դեպքում), մինչդեռ այլ հանգամանքներում այդ օգտագործումը կարող է գոնե մասնակիորեն չկանխատեսված լինել: Լեզվի բառապաշարային բաղադրիչների իմաստային դաշտը հեշտությամբ կարող է շահարկվել, երբ լրագրողները նպատակաուղղված ընտրում են բառեր և լեզվական այնպիսի կաղապարներ, որոնք կարող են ավելի խիստ և ազդեցիկ հնչել կոնկրետ համատեքստում: Այս իմաստային խառնաշփոթը կարելի է նկատել *բազմիմաստ բառերի* (polysemy), *բառային հակադրությունների* (oxymoron), *կրկնախոսքի* (double-speak) և այլ բառային միավորների օգտագործման մեջ:

Երկրորդ ենթազվյում ("The Morpho-Syntactic Properties of Manipulation in Media-Political Discourse") ուսումնասիրվում են քաղաքական մեդիա լրատվության մտաշահարկային դեպքերը լեզվի ձևաբանական և շարահյուսական մակարդակներում: Այս քննությամբ վեր են հանվում մի շարք լեզվական տարբերակիչ առանձնահատկություններ, որոնց իմացությունը օգնում է բացահայտել և հնարավորինս կանխել մտաշահարկման դեպքերը: Մեդիա-քաղաքական դիսկուրսի տարբեր տիպություններում մտաշահարկումներն օժտված են մեծ ներուժով, քանի որ յուրաքանչյուր անհատ հնարավորություն ունի մուտք գործելու ժամանակակից լրատվամիջոցների, թերթերի և ամսագրերի աշխարհ, որտեղ տեղեկատվության հոսքը օր օրի կարծես ավելի անկառավարելի է դառնում: Ուստի, լեզուն իր ձևաբանական ու շարահյուսական տարբեր հատկություններով (ներ-

³ Akyol, M. (2012). Armenian ethnic cleansing as ‘de-Islamization’. *Hürriyet Daily News*. // URL: <https://www.hurriyetdailynews.com/opinion/mustafa-akyol/armenian-ethnic-cleansing-as-de-islamization-19180> (մուտք 18.02.2022)

գործական և կրավորական սեռեր, պայմանական նախադասություններ, ածականների համեմատության աստիճաններ, բայի ժամանակածներ և այլն) կարող է օգտագործվել, երբ լրագրողը մտաշահարկելու մտադրություն ունի:

Դիտարկենք հետևյալ օրինակը՝ *Putin tells Macron Russia will reach aims through “negotiation or war”*⁴.

Ձևաբանորեն վերնագիրը հիմնականում բաղկացած է միաձևությամբ միավորներից՝ բացառությամբ *negotiation* (բանակցություն) բառի: Նման ընտրությունը մեծացնում է թիրախային լսարանը, և այս ենթադրությունը հաստատվում է ընթերցողի ընթերցողական միջոցով (Readability test. Web FX tools) իրականացված հարցումով: Լրագրողի՝ ընթերցողին մտաշահարկելու հիմնական նպատակներից է իր խոսքը հնարավորինս լայն լսարանի համար հասանելի դարձնելը, մի խնդիր, որը, վերոբերյալ դեպքում կարծում ենք հաջողությամբ է իրականացվել: Միևնույն ժամանակ, հեղինակը խուսափելով չափազանց պարզունակ հնչելու վտանգից՝ այնուամենայնիվ չի շրջանցել *negotiation* բառի գործածությունը, որն ըստ էության տվյալ վերնագրի միակ ածանցավոր միավորն է և ըստ Քեմբրիջի բառարանի՝ դիտվում է որպես C1 մակարդակի բառ⁵: Եթե փորձենք վերնագիրը վերաշարադրել այնպես, ինչպես ենթադրում է տիպիկ, քերականորեն ճիշտ անգլերեն նախադասությունը (*Putin tells Macron that Russia will reach aims through “negotiation or war”*), ապա նկատելի կդառնա լեզվի տնտեսման սկզբունքի լրագրողական մարտավարությունը:

Հաջորդ օրինակի *Russian Prices Rising Fastest in 24 Years on Ruble Collapse*⁶ վերնագրում կարելի է նկատել զեղչված բայական ձևեր, օրինակ՝ *prices rising*, որտեղ *are* օժանդակ բայի բացակայությունը կարող է մի կողմից համարվել *բացթողում* (ommission), իսկ մյուս կողմից՝ դիտվել որպես *բայական անդամի ածականացում* (verbal adjectivisation) այն իմաստով, որ *rising* միավորի ընտրությունը միտված է նկարագրելու գները (prices): Սակայն երկրորդ բացատրությամբ առաջնորդվելիս հարկ է այնուամենայնիվ նկատի ունենալ, որ անգլերենի կանոնակարգված շարահյուսության մեջ ածականները սովորաբար ոչ թե հետադաս են լինում, այլ նախադաս: Ձևաբանորեն նախադասությունը հնարավորինս պարզեցված է դրանով իսկ ընդգծելով *լեզվի տնտեսման օրենքի* լրագրողական գործադրումը, որն իր

⁴ PanArmenian Network. (2022). Putin tells Macron Russia will reach aims through “negotiation or war”. // URL:

https://www.panarmenian.net/eng/news/298874/?fbclid=IwAR23U9wp_YNuz3E6n3edARuPFC35RY0gKSm1I4yb-iaxwCpmw7GfyiwKtA0 (մուտք 17.04.2022)

⁵Negotiation. (n.d.). *In Cambridge Dictionary*. // URL: <https://dictionary.cambridge.org/dictionary/english/negotiation>

⁶ The Moscow Times, INDEPENDENT NEWS FROM RUSSIA. (2022). Russian prices rising fastest in 24 years on ruble collapse. // URL:

<https://www.themoscowtimes.com/2022/03/10/russian-prices-rising-fastest-in-24-years-on-ruble-collapse-a76858> (մուտք 20.04.2022)

հերթին հանգեցնում է իմաստակիր բառերի խտացված կիրառման և հետևաբար՝ իմաստի ուժգնացման: Այդ առումով՝ վերնագիրը կարելի է գրավիչ համարել: Տըվյալ վերնագրում *fast* ածականի կիրառությունը գերադրական աստիճանում՝ *fastest*, թույլ է տալիս նկատել, որ ածականներն ու մակբայերը նույնպես կարող են մտաշահարկային ներուժ ունենալ, հատկապես, երբ դրանք օգտագործվում են համեմատական և գերադրական աստիճաններում: Ասվածի վավերականությունը ստուգելու համար քննության առնենք վերը նշված հոդվածի վերնագիրը՝ ածականի համեմատության աստիճանների տեսանկյունից՝ *Russian prices rising faster in 24 years on ruble collapse* և *Russian prices rising fast in 24 years on ruble collapse*: Կարելի է եզրակացնել, որ որքան բարձր է համեմատության աստիճանը, այնքան ավելի ուժեղ ու ազդեցիկ է փոխանցվող տեղեկատվությունը:

Այս գլխի **երրորդ ենթագլխում** ("**The Stylistic Perspective of Manipulation in Media-Political Discourse**") քննության են առնվում քաղաքական մեդիա դիսկուրսի այն բոլոր ոճական առանձնահատկությունները, որոնք այս կամ այն կերպ նպաստում են լրագրողական խոսքի ազդեցության ինտենսիվացմանը, ընթերցողի հետաքրքրության ակտիվացմանը և, լայն իմաստով՝ նրա ընկալումների ուղղորդմանը: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իրենց առաքելությունն իրականացնելիս՝ լրագրողները մարտավարական նպատակներով հաճախ կիրառում են լեզվա-ոճական տարբեր հնարներ, որոնք ոչ միայն ավելի հարուստ ու սպավորիչ են դարձնում խոսքը, այլև օգնում են ավելի մեծ թվով աջակիցներ և հետևորդներ ներգրավելու և նրանց առավել մեծ արդյունավետությամբ մտաշահարկելու: Սույն ենթագլխում մեր ուսումնասիրության առարկան լրատվական հոդվածների քննությունն է լեզվա-ոճական վերլուծության մեթոդի կիրառմամբ, որի շնորհիվ հաջողվում է բացահայտել այն արտահայտչամիջոցներն ու ոճական հնարները, որոնք նպաստում են մտաշահարկմանը: Ասվածը լուսաբանելու համար դիտարկենք հետևյալ օրինակը՝ *BIG REGRET Russia gives middle finger to drone moments before craft blitzes Putin's forces*⁷: Հոդվածի վերնագրում առանձնահատուկ հետազոտական հետաքրքրություն է ներկայացնում ենթակա-ստորոգյալ հարաբերակցությունը (*Russia gives*), որտեղ կարող ենք նկատել *փոխանունության* (metonymy) և *անձնավորման* (personification) ոճական հնարների կիրառում: Հեղինակի մտաշահարկային մտադրությունը կամ նշված ոճական միջոցների կիրառման մտաշահարկային ներուժը գուցե դժվար կլիներ ուրվագծել, եթե հաջորդ օրը՝ մայիսի 30-ին, չտեսնեինք լրատվության նորացված տարբերակը. *INSTANT REGRET Russian gives middle finger to Ukrainian drone moments before craft blitzes Putin's forces & blows up tank*: Հոդվածը կարդալիս նկատվում է, որ առաջին վերնագրում գրված *Russia*, իսկ երկրորդում՝ *Russian* բառերը տարբեր իմաստային

⁷ Davis, K. (2022). INSTANT REGRET Russian soldier gives middle finger to Ukrainian drone moments before craft blitzes Putin's forces & blows up tank. *The Sun*. // URL: <https://www.thesun.co.uk/news/18722279/russian-soldier-middle-finger-ukrainian-drone> (մուտք 29.05.2022)

ազդեցություններ են հարուցում, մասնավորապես՝ *Russia* բառի համանուն կիրառումն ավելի ինտրիգային է, քանի որ դա պայմանականորեն կապվում է պետության, երբեմն՝ կառավարության կամ երկրի պաշտպանության նախարարության հետ: Մինչդեռ *Russian* բառի դեպքում հիմնանշանակությունն ու առնշանակային իմաստը գրեթե նույնն են:

Հատկանշական է շեշտել, որ երկու վերնագրերը (սկզբնականը և դրա խմբագրված տարբերակը) վերաբերում են մինևույն հոդվածին, որտեղ լրատվական ռեպորտաժին կցված տեսանյութի նկարագրությունը (*INSTANT REGRET Russian soldier gives middle finger to Ukrainian drone moments before craft blitzes Putin's forces & blows up tank*), և առանցքային տեղեկատվությունը (*THIS is the moment a Russian soldier flipped his middle finger at a Ukrainian drone before the craft reduced the troops and tank to a fireball wreckage*) հիշատակում են հենց զինվորին⁸:

Ակնհայտ է, որ ռուս զինվորի գործողությունը ամեն դեպքում մտազուգորդվում է Ռուսաստան պետության հետ, ինչը ուղերձը դարձնում ավելի ինտենսիվ ու սադրիչ (տես այս ատենախոսության էջ 59-60):

Չորրորդ ենթագլուխը (**“Manipulation as a Textological Phenomenon in Media-Political Discourse”**) անդրադառնում է տեքստային վերլուծության առանձնահատկություններին՝ որպես հետազոտական գործիքի՝ մեդիա լրատվական հեռարձակումներում մտաշահարկման դեպքերը տեքստաբանական տեսանկյունից ուսումնասիրելու համար: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս լեզվի տարբեր հայեցակերպերում արված մեր բոլոր դիտարկումները համակցելու և առավել ամբողջական ու լիարժեք պատկերացում ստանալու լրագրողի մտաշահարկային վարքագծի և ձեռք բերվող ազդեցության մասին:

Քաղաքական մեդիա դիսկուրսը հասկանալը և մտաշահարկումներից ու տեղեկատվական կողմնակալությունից խուսափելը պահանջում են ոչ միայն լեզվական և արտալեզվական հմտություններ, այլև տարբեր ռազմավարությունների իրազեկվածություն, ուստի տեքստային վերլուծության մեթոդը ուսումնասիրության այն բազմահայեցակերպ մոտեցումն է, որը հնարավորություն է տալիս վեր հանելու քաղաքական մեդիա լրատվական մտաշահարկման ամբողջական ներուժը: Ասվածը լուսաբանելու համար դիտարկենք հետևյալ օրինակը՝ *Armenian so-called Genocide*⁹:

2015 թ.-ի նոյեմբերի 20-ին ադրբեջանական առցանց լրատվական «Azvision.az» հարթակում անանուն հեղինակը տպագրել է հոդված՝ *Armenian So-called Genocide*

⁸ Davis, K. (2022). INSTANT REGRET Russian soldier gives middle finger to Ukrainian drone moments before craft blitzes Putin's forces & blows up tank. *The Sun*. // URL: <https://www.thesun.co.uk/news/18722279/russian-soldier-middle-finger-ukrainian-drone> (մուտք 29.05.2022)

⁹ Azvision.az (2015). Armenian So-Called Genocide. // URL: <https://en.azvision.az/news/23336/armenian-so-called-genocide--v-deos.html> (մուտք 22.06.2022)

վերնագրով: Հաշվի առնելով այնպիսի արտալեզվական գործոններ, ինչպիսիք են՝ հեղինակի բացակայությունը, տպագրության տեղը և նպատակը, անհնար է չնկատել մտաշահարկման ակնհայտ դեպքերը: Օրինակ, աչքի է ընկնում հեղինակի նպատակը. ցույց տալ և ապացուցել, որ հայերի ցեղասպանությունը «այսպես կոչված» է: Հետևաբար, պատահական չէ *so-called* անականի օգտագործման ընտրությունը վերնագրում, քանի որ այն ի սկզբանե շեշտադրում է հետևյալ իմաստը՝ *you do not think that the word or phrase that is being used to describe someone or something is appropriate*¹⁰: Այս պարագայում, անանուն հեղինակը ակնհայտորեն մտադիր է համոզել ընթերցողին, որ հայերը մոլորեցրել և խաբել են ամբողջ աշխարհին՝ մեղադրելով և դատապարտելով թուրքերին նման հանցագործության մեջ:

Շողվածը լի է հոգեբանական և լեզվաբանական մտաշահարկային նշաններով: Պարզաբանման համար ուսումնասիրենք հետևյալ հատվածը. *When armenian organizations instigated Armenians to revolt during World War I (1914-1918) against the Ottoman Government, their intention was to exterminate the Turks and to create an independent armenian state in eastern Anatolia where armenians were only about 15% of the total population*: Նշված հատվածում ակնհայտ է *manipulation of facts* և *overwhelming the target with facts and statistics* մտաշահարկային ռազմավարությունների գործադրումը, քանի որ, ըստ պատմական տվյալների՝ հայերն ապրել են իրենց հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում և այդ պահին էլ շատ մեծ տոկոս են կազմել:

Եթե ուշադրություն դարձնենք *armenia, armenians, independent armenian state* բառերի և բառակապակցությունների փոքրատառ գրառմանը, որն, ըստ անգլերենի հատուկ գոյականների կիրառման քերականական կանոնների՝ սխալ կիրառություն է, և ընդհակառակը, դիտարկելով այլ հատուկ գոյականների օգտագործումը, ինչպիսիք են՝ *World War I, Ottoman Government, Turks*, որոնք, ըստ կանոնի, գրված են մեծատառով, կարող ենք փաստել, որ այսպիսի մոտեցումը միտումնավոր սխալ է՝ բացահայտ կերպով հայերի նկատմամբ արհամարհանք և անպատվություն ցույց տալու, այլ ոչ թե տեխնիկական կամ քերականական վրիպակ:

Հեղինակի կողմնակալ և թշնամական վերաբերմունքն անվիճելի է, քանի որ հոդվածը ներառում է մտաշահարկային տեխնիկաների և մարտավարությունների այնպիսի ցանկ, ինչպիսիք են՝ *ժխտումը* (denial), *սուտը/ստեղը* (lying), *փաստերի կեղծումը* (falsifying the facts), որոնց նպատակը դիմացինի, տվյալ դեպքում հայերի *բացասական* (negative-other presentation), և իրենց՝ տվյալ դեպքում թուրքերի *դրական ինքնաներկայացումն* է (positive-self presentation): Ասվածը հաստատելու համար դիտարկենք հաջորդ հատվածը. *Entire population of the region was subjected to violence beyond belief violence which was planned to exterminate the whole Turkish*

¹⁰ So-called. (n.d.). In Oxford Learner's Dictionary. // URL: <https://www.oxfordlearnersdictionaries.com/definition/english/so-called?q=so-called>

people of the region to the last man, woman and child. Armenian revolters tortured and massacred large numbers of defenseless civilians. To assemble innocent civilians in the mosques and burn them in the building was one of their methods. Even today the traveler in that region is seldom free from the evidence of these armenian crimes. It must be pointed out that there is no historic position foiling the annihilation of minority groups under Hitler and the Third Reich to the revolt of the Armenians against the Ottoman Government in 1915:

Հարկ է նշել, որ ամբողջ հասվածում առկա է չափազանցության (exaggeration/overstatement) ակնհայտ դեպք՝ արտահայտված այնպիսի բառերով և արտահայտություններով, ինչպիսիք են՝ *exterminate*, որը նշանակում է ամբողջովին ոչնչացնել կամ սպանել, *beyond belief, subjected to violence, burn in the buildings* և այլն, մինչդեռ, հողվածի նախաբանում, որը վերաբերում է «Օսմանյան կառավարության դեմ ապստապմբություն հրահրող հայ կազմակերպություններին», հայերը կազմում են ամբողջ բնակչության հազիվ 15%-ը, և այստեղ նկատելի է տարբեր պատճառներով տեքստում տեղ գտած փաստերի և գաղափարների անհամապատասխանությունն ու հակասություն, քանի որ այդպիսի քիչ քանակով գործնականում անհնար կլինեք ամբողջովին ոչնչացնել Օսմանյան Կայսրության ամբողջ թուրք ազգաբնակչությանը:

Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում հետևյալ նախադասությունը՝ *Entire population of the region was subjected to violence beyond belief violence which was planned to exterminate the whole Turkish people of the region to the last man, woman and child*, որտեղ նկատվում է թվարկման ոճական հնարը (enumeration), երբ առկա է անվանումների մի որոշ շրջա: Սրա նպատակը «հայերը պատրաստ էին սպանել բոլորին՝ առանց բացառության» գաղափարի քարոզումն է: Նույն նախադասության մեջ նկատվում է նաև *կցուրդ* (anadiplosis)՝ մեկ այլ ոճական հնար, որտեղ հեղինակը, կրկնելով բառակապակցության վերջին բառը հաջորդ նախադասության սկզբում, փորձում է հասնել առանձնահատուկ ազդեցության, տվյալ դեպքում՝ շեշտել «հայերի հակամարդկային էությունը»՝ *Entire population of the region was subjected to violence beyond belief violence which was planned to exterminate... :*

Հետևողականորեն և անազնվորեն հայերին թուրքերի ցեղասպանության մեջ մեղադրելով՝ հեղինակն առաջ է քաշում հետևյալ փաստարկները.

- First of all, the Armenians were in armed revolt against the Ottoman Government. The Jews, Wenss and others of Hitler's Germany ware not.
- Secondly, the Allies actually promised the Armenians nothing for their revolt, except some amorphous phrases from the British.
- Thirdly, that anyone has to die is regrettable, but history is unfortunately full of examples of similar events, and it is obvious that the responsables of the innocent Turkish, and Armenian victims of the Armenian revolts are the Leaders of the Armenian Revolutionary Organizations who incited armenians to revolt against legal Ottoman Government.

Թվում է, թե վերոնշյալ հասկաններում հեղինակը հետևել է էսսե գրելու կառուցվածքին, որտեղ օգտագործելով *first of all, secondly, thirdly* բառերը, փորձում է ընթերցողին մատուցել իբրև թե ողջամիտ փաստարկներ՝ իր հայտարարությունները ավելի վստահելի դարձնելու համար: Առաջին կետում հեղինակը նշում է, որ հայերը զինված ապստամբել են Օսմանյան կառավարության դեմ, մինչդեռ հիտլերյան Գերմանիայի իրենները, վենները և մյունները՝ ոչ: Բարդ նախադասությամբ արտահայտված ենթադրյալ համեմատության միջոցով հեղինակը կիրառում է մտաշահարկման՝ *մեղքի խայծի* (guilt baiting) ռազմավարությունը, որտեղ նկատելի է թաքնված պայմանականությունը. որպես վարկած առաջ է քաշում այն ակնարկը, թե «եթե զինված չլինեիք, չէիք ենթարկվի կոտորածի»:

Մյուս նախադասության մեջ՝ *that anyone has to die is regrettable, but history is unfortunately full of examples of similar events*, հեղինակն օգտագործում է բարոյական կոդեքսը (ethical code)՝ հուզական վիճակն ավելի բարձրացնելու համար, և այն փաստը, որ ամբողջ հողվածում հայերին բնութագրելիս օգտագործում է այնպիսի միավորներ, ինչպիսիք են օրինակ՝ *so-called, armed, seldom-free, violence, beyond belief, torture and massacre, Armenian crimes, responsibility* և այլն, որոնք խոսքը դարձնում են չափազանց դրամատիկ, մինչդեռ թուրքերին նկարագրելու համար բառերի ու բառակապակցությունների ընտրությունն այնպիսին է (*innocent Turks, defenseless civilians, legal Ottoman Government, internecine battle with invaders*), որ դա անպայմանորեն կստիպի պատմությունից ու Հայոց ցեղասպանությունից անտեղյակ լսարանին «հավատալ» և «հասկանալ», թե ինչքան «չար» ու «վատ» են հայերը, և ինչքան «քաջ» ու «հերոսական» են թուրքերը: Հեղինակի ցեղասպանության մասին պնդումների անհերթելիությունն ակնհայտ է հողվածի յուրաքանչյուր պարբերությունում, թեև հողվածը կարող է իրատեսական թվալ պատմական ողբերգության մասին բավարար կամ որևէ տեղեկություն չունեցող լսարանին: Կարելի է նաև շեշտել, որ ոչ միայն հողվածում օգտագործված լեզուն ունի մտաշահարկային բնույթ, այլ նաև դիզայնի որոշ առանձնահատկություններ, ինչպիսիք են՝ պատկերը, դասավորությունը, տառաչափը և այլն, անկասկած, նույնպես նպաստում են հոգեբանական ճնշում ապահովելուն և մարդկանց վրա ազդելուն: Վերոնշյալ տեսակետը կարելի է ներկայացնել հողվածում տեղ գտած հետևյալ պատկերի վերլուծությամբ (*տես բերված նկարը*):

Նկարի տեքստային բաղադրիչների վերաբերյալ որոշ ակնարկներ անելու համար կարող ենք անդրադառնալ հետևյալ երկու նախադասությունների վերլուծությանը՝ *PROTEST ARMENIAN LIES* և *Armenian Genocide is an Imperialist Lie!*: Տեսողականորեն՝ առաջին նախա-



դասությունը գրված է մեծատառերով, իսկ մյուսում՝ յուրաքանչյուր բառի առաջին տառն է մեծատառ: Այսպիսով, կարող ենք ենթադրել, որ հեղինակի առաջնային ուշադրությունն ու նպատակը՝ *protest* (բողոք) բառն է, «անհամաձայնություն, անհավանություն կամ ընդդիմություն արտահայտող խիստ բողոք»: Վերլուծությունը շարունակելով, կարելի է նաև նկատել, որ *lie* (սուտ) և «հայ» (Armenian) բառերը պատկերում կրկնվում են երկու անգամ: Առկա է նաև թուրքական դրոշը: Հակիրճ անդրադառնալով այդ տարրերին, կարող ենք ասել, որ հողավածի հեղինակն անանուն պնդումներ է անում՝ առանց փաստերի և ապացույցների, և շարահյուսական ոճական հնարի՝ *կրկնության* (*repetition*) օգտագործումը մտաշահարկային ռազմավարություն է այն իմաստով, որ պատմությանն ու ճշմարտությանն անտեղյակ ընթերցողները հայերին վերագրված հետագա բոլոր մեղադրական տեքստերն ու հայտարարությունները ենթագիտակցաբար կարողանան ընդունել որպես իրականություն: Հաշվի առնելով հեղինակի ադրբեջանցի լինելն ու միայն թուրքական դրոշի ներառումը, կարող ենք մատնանշել հեղինակի կողմնակալ և կանխակալ վերաբերմունքը:

Մեկ այլ տարր, որն ուշադրություն է գրավում պատկերում, ագրեսիան է՝ շեշտված կարմիր ու սև գույներով: Ագրեսիան ընդգծող դետալը՝ աչքի տակ գտնվող գիծն է, որը բնորոշ է հովազին և այլ գիշատիչների: Սովորաբար, ստի դեմ պայքարող անձն այսպիսի տեսք չի ունենում: Կարմիր բծերի շնորհիվ առավել ընդգծված կերպարի սանրվածքը բնորոշ է ֆրանսուհիներին, և թերևս, կերպարը հղում է հանրահայտ Ժաննա դ'Արկին, ով խորհրդանշում է արդարության համար մղվող պայքարը: Այս առումով՝ ընթերցողները կարող են վստահել կերպարին:

Վերջապես, ուշադրություն դարձնելով դեպի աջ թեքված թուրքական դրոշին, կարող ենք ասել, որ Թուրքիան ներկայացված է որպես գոհ: Բայց, եթե նույնիսկ հետևենք տրամաբանությանն ու անտեսենք պատմական անցյալը, ակնհայտ է, որ Թուրքիան երբեք չի կարող լինել այն պետության գոհը, որի ոչ միայն ներկայիս տարածքն է իրենից շատ ավելի փոքր, այլ նաև բնակչությունը, գորքը, տնտեսությունը և այլն:

Հինգերորդ ենթազույգը (**“Media-Political Manipulation as an Object of Qualitative-Quantitative Study”**) նվիրված է մտաշահարկման ուսումնասիրությանը՝ որակական-քանակական հետազոտության մեթոդների օգտագործմամբ: Այս ուսումնասիրության մեջ որակական-քանակական հետազոտության մեթոդների ինտեգրումը կարող է օգնել մեզ ավելի խորը պատկերացում կազմել այն մասին, թե ինչպես է հանրությունը կարողանում ընկալել և բացահայտել լեզվական մտաշահարկման դեպքերը մեդիա-քաղաքական լուրեր ընթերցելիս: Հարկ է նշել, որ որակական-քանակական հետազոտության մեթոդների կիրառմամբ մենք կարող ենք ոչ միայն գնահատել հարցվողների կարծիքը «մտաշահարկում» երևույթի մասին, նրա լեզվական ու արտալեզվական դրսևորումների առանձնահատկությունները, այլև հնարավորինս ճշգրիտ դասակարգել ու կիրառել ստացված գիտելիքներն ու տվյալները: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ այն հարցին, թե «Ինչպե՞ս եք հասկանում մտաշահարկման հայեցակարգը» (How do you understand

the 'Concept of Manipulation'?), մասնակիցների 27,72%-ը պատասխանել է «ազդեցություն ինչ-որ մեկի վրա» (influence on someone), իսկ 25,74%-ը արձագանքել է «վերահսկողություն ունենալ մարդկանց վրա» (Control over people) արտահայտությամբ: Հարցվածների 18,81%-ի համար մտաշահարկումը «քարոզչություն» (propaganda) է, մյուսները (13,86%) կարծում են, որ դա «կեղծ տեղեկատվություն» (fake information) է և այլն (տես այս ատենախոսության էջ 85):

Ուսումնասիրության շրջանակներում մենք նաև փորձել ենք հասկանալ, թե մեդիա-քաղաքական լրատվական հոդվածը կարդացող մարդիկ որքանով են ուշադրություն դարձնում դրա համատեքստային կամ տեսողական բաղադրիչներին, կամ երկուսին էլ: Մեր նպատակին հասնելու համար հարցվածներին խնդրվել է ընտրել առաջարկվող երկու լուրերից մեկը, որը նրանք կնախընտրեն կարդալ: Հետաքրքիր է նշել, որ հարցվածների 71%-ը ընտրել է «Armenian So-Called Genocide» լրատվական հոդվածը (արդյունքների համաձայն՝ նրանց ընտրության 80%-ը պայմանավորված է եղել վերնագրով և տեքստային բաղադրիչներով, իսկ մասնակիցների 20%-ի ընտրությունը՝ պատկերով, դիզայնով և գույներով (տես այս ատենախոսության էջ 97-100):

Մարդիկ, որոնք ընտրել են նշված հոդվածը՝ ելնելով տեքստային բաղադրիչներից, վերնագիրը ամբողջությամբ համարում են գրավիչ (54%): Ի հավելումն սրան՝ կարևոր է նշել, որ *Genocide* բառն ինքնին սադրիչ է, քանի որ ժողովրդի ընտրության 20%-ը որոշվել է միայն այդ բառով: Հետաքրքիր է, որ հոդվածում և վերնագրում, նաև կցված նկարի մեջ *Genocide* բառը կիրառվել է երկու անգամ, ինչը թույլ է տալիս գալ այն եզրակացության, որ այս բառը ուշադրություն գրավելու գործողությունն ունի (այս է վկայում նաև ընդհանուր պատասխանների 74%-ը):

Ինչ վերաբերում է մյուս հոդվածին, *Where's Boris? Johnson missing in action at Biden's climate summit*, մասնակիցների 29%-ը նյութը համարել է հետաքրքրական, իսկ 36%-ը ուշադրություն է դարձրել վերնագրի մեջ հարցական նախադասությանը (*Where's Boris?:*): Հարցմանը մասնակցած մարդկանց 64%-ը հոդվածը որակել է պատմողական (*Johnson missing in action at Biden's climate summit*): Ինչ վերաբերում է տեսողական բաղադրիչներին, ապա հարցվողների 44%-ը ուշադրություն է դարձրել Բորիս Ջոնսոնի տեսքին, իսկ 56 %-ը՝ նկարում պատկերված զարեջրի բաժակին:

Այսպիսով՝ քաղաքական մեդիա դիսկուրսի որակական-քանակական մեր ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ այն հագեցած է մտաշահարկման տարաբնույթ դրսևորումներով, և ընթերցողի համար դրանց դիմակայելը հեշտ չէ, քանզի դրա համար պահանջվում է ոչ միայն լեզվական և արտալեզվական փաստերի բարձր իմացություն, այլև պատկերային ընկալման լավ հրմտություններ և հենքային հարուստ գիտելիքներ:

Ատենախոսության **Եզրակացություն** բաժնում ի մի են բերվում քաղաքական մեդիա դիսկուրսի մեր ուսումնասիրության արդյունքները.

- Քաղաքական մեդիա դիսկուրսը և նրանում տեղ գտնող մտաշահարկումը քննող տարբեր մոտեցումների և տեսությունների մեր քննական ուսում-

նասիրությունը բերում է այն համոզման, որ քաղաքական մեղիա դիսկուրսը մշտապես հազեցած է մտաշահարկման տարաբնույթ դեպքերով, որոնց իրականացման հիմնական գործիքը լեզուն է: Մտաշահարկային ռազմավարություն իրագործելու համար այստեղ ներդրվում են լեզվի տարբեր հայեցակերպերում դրսևորվող միջոցներ: Կարևորվում է նաև արտալեզվական տեղեկատվության դերը:

- Մտաշահարկման հայեցակարգի՝ որպես հոգեբանական երևույթի ուսումնասիրության տարբեր մոտեցումների մեր դիտարկմամբ հաջողվել է բացահայտել մտաշահարկային ռազմավարությունների ու մարտավարությունների մի ամբողջ շարք: Սրանց կիրառումը հիմնականում կախված է իրավիճակային համատեքստից, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդում է մեր զգացմունքների և ուրիշների հետ մեր փոխհարաբերությունների վրա:
- Քաղաքական մեղիա դիսկուրսի մտաշահարկային բնույթի գործառական-հաղորդակցական դիտարկումը կիրառվող բառապաշարի տեսանկյունից թույլ է տալիս եզրակացնել, որ բառերի մտաշահարկումը առաջնային կարևորություն ունի այստեղ, գլխավորապես կանխատեսված է: Քննարկված տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քաղաքական մեղիա դիսկուրսում մտաշահարկման իրականացմանը նպաստող միավորների շարքում հատկապես աչքի են ընկնում բազմիմաստ բառերը, բառային հակադրությունները, կրկնախոսքը և այլն: Որոշ բառեր ու արտահայտություններ, որոնցում ըստ էության բացակայում են բռնության կամ ագրեսիայի իմաստային բաղադրիչները, այնուամենայնիվ համատեքստի ազդեցությամբ կարող են ձեռք բերել դրանք և դառնալ մտաշահարկող տարրեր:
- Քաղաքական մեղիա դիսկուրսի ձևաբանական և շարահյուսական հայեցակերպերի ուսումնասիրությունը թույլ է տալիս նկատել, որ քերականական օրինաչափությունները նույնպես կարող են մեծ ազդեցություն ունենալ հաղորդակցական ուղերձի վրա: Օգտագործված բառապաշարը տեսադաշտում պահելով և քննադատական մտածողության հմտություններ կիրառելով՝ լրատվական հոդվածներում կարելի է բացահայտել ձևաբանական ու շարահյուսական այնպիսի հատկանիշներ, որոնք օժտված են մտաշահարկման ներուժով: Այդ առումով առանձնապես ակտիվ ազդեցություն կարելի է ակնկալել բայի ներգործական և կրավորական սեռերի, պայմանական-ենթադրական նախադասությունների, անականի համեմատության աստիճանների կիրառությունից, որոնք ակնհայտորեն խոստումնալից են մտաշահարկման ռազմավարության իրականացման հարցում:

- Քաղաքական մեդիա դիսկուրսի լեզվա-ոճական հայեցակերպի քննությունը բացահայտում է մտաշահարկման ռազմավարության իրականացում փոխաբերական իմաստների ակտիվ կիրառմամբ: Ոճական այս կամ այն երանգավորումն ունեցող բառերն ու արտահայտչամիջոցները (փոխաբերություն, փոխանունություն, համեմատություն, մակդիր, կրկնություն, նրբաբանություն և այլն) նվազեցնում են լրագրողի չեզոք վերաբերմունքը ներկայացված տեղեկատվության նկատմամբ, մեծացնում կողմնակալությունը, հուզական ազդեցություն գործում ընթերցողի վրա, և ապակողմնորոշում նրան՝ մտաշահարկելով նրա ընկալումը:
- Քաղաքական մեդիա դիսկուրսի դիտարկումը տեքստի մակարդակում մի կողմից հիմնավորում է տեքստային վերլուծության կարևորությունը, քանի որ հնարավորություն է տալիս վեր հանելու լեզվական մտաշահարկման դեպքերը լեզվի կիրառության տարբեր շերտերում, մյուս կողմից բացահայտելու ոչ լեզվական միջոցների (պատկերներ, գծապատկերներ, դիագրամներ, վերնագրերի յուրօրինակ ձևավորումներ և այլն) դերը մտաշահարկման նպատակ իրագործելու հարցում: Վերջինների գործադրումը քաղաքական մեդիա լրատվության մեջ թույլ է տալիս հեշտությամբ կառավարել ընթերցողին նաև տեսողական և հոգեբանական մակարդակներում:
- Առցանց հարցման միջոցով քաղաքական մեդիա դիսկուրսի որակական-քանակական ուսումնասիրության կիրառումը մտաշահարկման դիտանկյունից թույլ է տալիս նկատել, որ մարդիկ հեշտությամբ են ենթարկվում մտաշահարկման, եթե ցածր է լեզվի իմացության նրանց մակարդակը, չունեն բավարար չափով հենքային գիտելիքներ և քննադատական մտածողության հմտություններ կիրառելու կարողություն, որն էլ հնարավորություն է տալիս լրագրողին որոշակի ազդեցություն գործել մարդկանց ենթագիտակցության վրա, համոզել, որ մատուցվող տեղեկատվությունը ճշմարտացի է և հասարակական կարծիքը ձևավորել յուրովի:

Ատենախոսության հիմնադրություններն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Approaches and Theories to the Study of Political Speech // Armenian Folia Anglistika, Vol. 17, Issue 1 (23), Yerevan, 2021, pp. 52-65.
2. Manipulative Speech: A Theoretical Overview // Armenian Folia Anglistika, Vol. 17, Issue 2 (24), Yerevan, 2021, pp. 11-26 (co-author - S. Gasparyan):
3. The Manipulative Nature of Media-Political Discourse // Armenian Folia Anglistika, Vol. 18, Issue 1 (25), Yerevan, 2022, pp. 9-22 (co-author - S. Gasparyan).

4. The Morpho-Syntactic Aspect of Media Political Discourse // Օսոսը Լեզուները Բարձրագույն Դպրոցում, 1(32), Երևան, 2022, էջ 27-38 (համահեղինակ- S. Gasparyan):
5. The Specificity of Language Style in Media-Political Discourse // Օսոսը Լեզուները Բարձրագույն Դպրոցում, 1(32), Երևան, 2022, էջ 39-53:
6. Media-Political Discourse from a Textological Viewpoint // Armenian Folia Anglistika, Vol. 18, Issue 2 (26), Yerevan 2022, pp. 24-40.
7. A Qualitative-Quantitative Study of Media Political Discourse from the Perspective of Manipulation //Armenian Folia Anglistika, Vol. 18, Issue 2 (26), Yerevan 2022, pp. 41-58.

РАФАЭЛЬ АРУТЮНЯН
ИНТЕГРАТИВНОЕ ИССЛЕДОВАНИЕ МЕДИАДИСКУРСА
(НА МАТЕРИАЛЕ АНГЛИЙСКОЙ ПОЛИТИЧЕСКОЙ РЕЧИ)

Резюме

Целью исследования является изучение языковых средств, обладающих полным/частичным манипулятивным потенциалом, которым пользуются манипуляторы (в данном случае журналисты) при обращении к своим адресатам, запутывая и вводя их в заблуждение, оказывая на них воздействие, стараясь убедить их в правдоподобности передаваемой ими информации и, наконец, направляя их действия.

Для достижения поставленной цели в работе ставятся и решаются следующие **задачи**:

- рассмотреть различные подходы и теории к изучению политического дискурса с целью выделения основных компонентов политики и политической речи, таких как действие, конфликт, сотрудничество, язык и т.п.;
- изучить понятие манипуляции как лингвистического и психологического явления и его возможное проявление в медиадискурсе, определить манипулятивные стратегии и тактики, которые используются и выражаются через различные языковые средства и приемы;
- определить манипулятивную природу медиа-политического дискурса, уделяя основное внимание лексическому аспекту языкового манипулирования;
- выделить морфосинтаксические особенности медиа-политического дискурса;
- выявить специфику языкового стиля в медиа-политическом дискурсе, применяя лингвостилистический метод анализа, который позволяет распознать экспрессивные и стилистические средства в контексте новостных статей;
- изучить медиа-политический дискурс с текстологической точки зрения с помощью различных методов анализа: сравнительно-контрастивного, индуктивно-дедуктивного, лингвостилистического, текстуального и др.;
- с помощью платформы онлайн-опроса провести качественно-количественное исследование по результатам восприятия манипуляции для обеспечения достоверности полученных нами результатов.

Актуальность настоящего исследования определяется тем, что интернет-СМИ все чаще рассматриваются как основной источник информации, и проведение лингвистического исследования с целью выявления явных и неявных проявлений языковой манипуляции в медиа-политическом дискурсе позволяет обнаружить не только лингвистические, но и экстралингвистические средства манипулирования.

Новизна исследования заключается в том, что впервые предпринята попытка подвергнуть медиа-политические новостные статьи и заголовки интегративному и комплексному лингвопрагматическому анализу. Новым является также качественно-количественное исследование, проведенное с помощью программы онлайн-опроса, который может способствовать восприятию и идентификации явления манипуляции в СМИ.

Возможность мультимодальной реализации манипуляции в медиа-политическом дискурсе, а также наше намерение всестороннего исследования такого сложного явления, как манипулятивная речь, определили **методологическую направленность** данного исследования. Были применены разнообразные методы анализа, в том числе: сравнительно-контрастивный, индуктивно-дедуктивный, лингвостилистический, прагмасемантический, текстологический, а также метод критического дискурса-анализа. При этом анализ проводился на фактическом материале медиа текстов (новостные статьи, репортажи, мнения, заголовки новостей), которые представляют и освещают основанные на различных политических событиях материалы.

Теоретическое значение работы состоит в том, что результаты данного исследования, достигнутые на основе важнейших положений таких областей, как политология, журналистика и, в частности, лингвистика и теория дискурса могут внести определенный вклад в разработку общей теории манипуляции в целом и способствовать развитию новых направлений в изучении данной проблемы.

Практическая ценность исследования обусловлена возможностью применения основных результатов работы в теории коммуникации и политологии, а также их использования в теоретических и практических курсах по прагматике, семантике, лингвостилистике, медиалогии, журналистике, критическому дискурсу-анализу. Выводы данного исследования могут также найти дальнейшее развитие при выполнении дипломных, магистерских и кандидатских работ.

RAFAYEL HARUTYUNYAN
INTEGRATIVE STUDY OF MEDIA DISCOURSE (WITH SPECIAL
REFERENCE TO ENGLISH POLITICAL SPEECH)

Summary

The **aim** of the research is to find out the linguistic properties and means that possess a full or partial potential of manipulative language in use, via which manipulators (in this case journalists) target, mislead, confuse, make an impact on, etc., their addressees.

The aim of the research is accomplished through a thorough examination of the following research **objectives**:

- to observe thoroughly different approaches and theories to the study of political discourse with the purpose of outlining the main components of politics and political speech, such as language, action, conflict and cooperation, etc.;
- to study the concept of manipulation as a linguistic and psychological phenomenon and its possible manifestation in media discourse, as well as the manipulative strategies and techniques that are employed and expressed through different language means and properties;
- to study the manipulative nature of media-political discourse placing our central interest on the lexical aspect of language manipulation;
- to study the morphological and syntactic properties of media-political discourse;
- to reveal the specificity of language style in media-political discourse by applying the linguo-stylistic method of analysis, which allows to recognize expressive and stylistic devices in the context of news articles;
- to study media-political discourse from a textological viewpoint through different methods of analysis: linguo-stylistic, comparative-contrastive, textual, etc.;
- through an online survey platform to undertake a qualitative-quantitative study based on the results of our observations in order to explore how manipulation is perceived by public to make our conclusions as logical and reliable as possible.

The **relevance** of the present study is determined by the fact that online media is increasingly regarded to be the main source of information, and it is worthwhile to do linguistic research to uncover the explicit and implicit cases of language manipulation in media-political discourse through not only linguistic but also extralinguistic properties of the language.

The **novelty** of the research stems from the fact that for the first time an attempt has been made to expose media-political news articles and headlines to

integrative and comprehensive linguo-pragmatic analysis, rather than confining the examination to one particular aspect of the language (e.g., lexical). The fundamental objective of the qualitative-quantitative research conducted through the online survey software reveals people's perception and detection of manipulation and manipulative speech, which can serve as a starting point for the goals underlying investigation on manipulation. The application of this integrated approach spreads light on the phenomenon of manipulation particularly in the media and adds to the elaboration of the overall theory of manipulation at large.

The research is of **theoretical significance** since its outcomes can enable us to refer to the theoretical framework of the study of media discourse, political sciences, social studies, journalism, news writing, news reporting and most importantly – linguistics. The results may also be of interest for reconsidering the gained data and findings in investigations of the abovementioned disciplines.

The **practical value** of this work is conditioned by the fact that the findings of the present research can be applied by specialists of the theory of communication and political analysts, as well as employed in the theoretical and practical courses of pragmatics, semantics, stylistics, media studies, journalism, critical discourse analysis, etc. The results obtained can also find further development in the coming Diploma papers, MA theses, PhD works as well as be integrated in practical English courses.

Methodology. The research has been carried out with the help of the following general methods of analysis – comparative-contrastive, inductive, deductive methods, as well as discourse and critical discourse analyses, lexico-semantic, pragmasemantic, linguo-stylistic methods of analysis as well as textological and semiotic methods.

The area of our investigation comprises the list of the following disciplines: Discourse Analysis, Pragmatics, Stylistics, Text Linguistics, Media Discourse, Political Discourse, News Writing, Political Journalism.

The Data of the Research. The analyses are carried out with reference to media texts (news articles, reports, opinions, news headlines) that illustrate and represent stories based on different political events.

The structure of the research paper is conditioned by its purpose: it consists of an introduction, two chapters, conclusion and bibliography.

